Հավելված 2
«23» հունվարի 2025 թ. -ին
Կնքված N «ԴՏՊ-11414-11018/25 ՀԿԱՐԳ11» պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 3**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»<br>Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոն |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-11414-11018/25 ՀԿԱՐԳ11» |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | *ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն* |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | *«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ* |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | *03.01.2025-31.12.2025* |
| **Հաշվետու ժամանակահատված** | ***01.06.2025-30.09.2025*** |
| **Ներկայացման օր** | *07.10.2025թ* |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սոնա Խաչիկյան, կենտրոնի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

*Միջոցառումը նպատակ է հետապնդում ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրում, ինչպես նաև նպաստել երեխաների սոցիալ-հոգեբանական, կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և սոցիալական մեկուսացումը, ապահովելու ընտանիքի հետ վերամիավորումը՝ նպաստելով կյանքի դժվարին իրավիճակում հայտված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:*

Հակիրճ նկարագիր հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի §Փոքրիկ Իշխան¦ ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում: Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը՝ անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա:
Օրեկան կենտրոն է հաճախել **15-32** երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:
Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի / խոսքի զարգացում/
- Անձնական ուղեկցողի
- Խմբավարի
- Սննդի տրամադրում / տաք  ճաշ կենտրոնում

Կենտրոնի գործողությունների իրականացմանը ներգրավված են եղել, **1** ծրագրի ղեկավար, **1** համակարգող, **2** սոցիալական աշխատող, **1** հոգեբան, **1** լոգոպեդ, **1** խմբակավար, **1** խոհարար, **1** տնտեսուհի, **1** տնտեսվար-վարորդ, **2** կամավոր: Իրականացված բոլոր գործողությունները պլանավորվել և իրականացվել են ծրագրի ղեկավարի գիտությամբ ու համագործակցությամբ:
Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ: Շահառու երեխաները ընդգրկված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններին, սոցիալական կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ ըստ գնահատված սոցիալական կարիքների և անհատական սոցիալական ծրագրի:
Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովված են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով:
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շահառուներին նաև տրամադրվել է գրենական պարագաների փաթեթ՝ որպես սոցիալական աջակցություն:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.**

**ՀՀ Սահմանադրության օր-Հուլիսի 5:** Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնում նշվել է ՀՀ Սահմանադրության օրը, որին մասնակցել է **15** երեխա, որից **4** աղջիկ, **11** տղա: Տեղի է ունեցել <<Իրավունքի Այբուբենը>> ֆիլմաշարերի դիտում-քննարկում, ինչպես նաև թեմատիկ <<Էնթեր Դիգնիթիլենդ>> սեղանի զարգացնող ինտելեկտուալ խաղի իրականացում, որի նպատակն էր մարդու իրավունքների կրթության միջոցով տեղեկացնել երեխաներին սոցիալական իրավունքների մասին:
Խմբային աշխատանքի ընթացքում իրականացվեց դերային խաղ, որտեղ երեխաները բաժանվեցին 4 խմբերի և ստանձնեցին օրենսդիր մարմնի դերը և դուրս բերեցին պետության սոցիալական քաղաքականության մշակման համար կարևոր ոլորտները: Աշխատանքը նպաստեց երեխաների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև որոշումների կայացման հմտությունների զարգացմանը:

**ՀՀ Անկախության օր- 21.09**: Իրականացվել է խմբային աշխատանք ուղղված ՀՀ Անկախության օրվան, խմբային աշխատանքի նպատակն էր զարգացնել շահառուների թիմային համագործակցությունը, ծանոթացնել Հայաստանի անկախության խորհրդանիշներին ու պատմական նշակությանը, ձևավորել հայրենասիրական արժեքներ: Խմբային աշխատանքին մասնակցել են թվով **12** շահառուներ, որից **5** աղջիկ, **7** տղա:
Խմբային աշխատանքի ընթացքում ներկայացվեց Հայստանի անկախության օրվա նշակության մասին: Շահառուները բաժանվեցին 2 խմբի: Առաջին խմբին հանձնարավեց պատրաստել պաստառ իրենց երազած ապագան 10 տարի հետո խորագրով, մյուս խմբին հանձնարավեց վեր հանել և ներյակացնել Հայաստանի խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան ու օրհներգի նշակությունը: Իրականացվեց խմբային վերլուծություն և ամփոփում:
*Աշխատանքը նպաստեց շահառուների գիտելիքների ամրապնդմանը Հայաստանի անկախության մասին, ինչպես նաև նպաստեց թիմային համագործակցությանը և հաղորդակցման հմտությունների զարգացմանը:*

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները:**

**1. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկանին խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **73** երեխայի հետ, որից **29** աղջիկ, **43** տղա:
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն է ընդգրկվել **8** շահառու և դուրս է գրվել **6** դեպք: Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱՍԾ-ների կազմում: Պարբերաբար թարմացվել է և համալրվել է շահառուների անձնական տվյալների բազան:
Ըստ **73** շահառուների շրջանում գնահատված կարիքների՝ կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ:
Ծրագրի շահառուները մասնավորապես առանձնացվել են ըստ հետրևալ սոցիալական խմբերի՝

- Միածնող ընտանիքի երեխաներ- **9**
- Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ-**1**
- Վարքային դրսևորումներ ունեցող երեխաներ- **3**
- Անբարենպաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ-**1**
- Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ-**34**
- Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ –**12**
- Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ-**13**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի §Փոքրիկ Իշխան¦ ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **49** ընտանիքի հետ:
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **63** ընտանիքի անդամների հետ՝ որից **49** մայր, **4** հայր, **1** քույր, **1** հորեղբայր, **1** քեռի, **1** եղբայր, **5** տատիկ, **1** պապիկ:

Ըստ իրականացված հետազոտության ծրագրի **49** շահառու ընտանիքները պատկանում են հետևյալ տեսակների՝

- Ընդարձակ ընտանիքներ– **25**
- Նուկլեար ընտանքների թիվ – **21**
- Միայնակ ընտանիք – **2**
- Առանձնացված ծնողների ընտանիք - **1**

Ըստ գնահատված կարիքների շահառու ընտանիքներից **35**-ը ստանում են ընտանեկան նպաստ, գործազուրկ ծնողների թիվը կազմում է **32** (որից **28** մայր, **3** հայր), աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **45** (որից **21** մայր, **24** հայր), արտագնա աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **10** (հայր), հաշմանդամություն ունեցող և անաշխատունակ ծնողների թիվը կազմում է **5** (հայր):

2. **Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:**

**<u>Ամենօրյա տաք սնունդ կենտրոնում:</u>** Հաշվետու ժամանակահատվածում օրեկան կենտրոն է հաճախել **15-32** երեխա և մասնակցել է կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխա օգտվել է ամենօրյա տաք սննդից:
Կենտրոնում ճաշը պատրաստվել է կենտրոնի խոհարարի կողմից՝ ըստ նախորոք մշակված ճաշացանկի:
Շահառուների հաճախման գրանցամատյան է վարվել սոցիալական աշխատողների կողմից: Խոհանացում ևս վարվել է ամենօրյա գրանցամատյան:

<u>Սոցիալական աշխատողների կողմից</u> կազմվել և պարբերաբար թարմացվել են փաստաթղթերը, մասնավարապես լրացվել են հետևյալ փաստաթղթերը՝
- Առաջնային տնային այցելության թերթիկ
- Երեխայի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների գնահատաում
- Շահառուի և ընտանքիի կարիքների վերագնահատում
- Սոցիալական պատմության հավաքագրում
- Գենոգրամի և էկոգրամի կազմում
- ԱՄԾ-ի (միջամտության պլան) կազմում
- Օրագրերի կազմում և թարմացում
- Անհատական սոցիալական աշխատանքի թերթիկ
- Ընտանիքի անդամի հետ աշխատանքի թերթիկ
- Ընթացիկ տնային այցելության թերթիկ
- Դպրոց այցելության թերթիկ
- Թիրախ խմբերի հետ աշխատանքի փաստաթղթավորում
- Նվիրատվության բնույթի պայմանագրերի կազմում և կնքում

<u>Հոգեբանը</u> կազմվել է հետևյալ փաստաթղթերը՝
- Երեխայի անհատական քարտի լրացում
- Խորհրդատվություն երեխայի հետ
- Խորհրդատվություն ընտանիքի անդամների հետ
- Հոգեբանական աշխատանքի թերթիկ
- Տնայցեր
- Թիրախ խմբերի հետ աշխատանքի փաստաթղթավորում

## <u>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՒԹՅՈՒՆ</u>

**<u>Անհատական սոցիական խորհրդատվություն:</u>** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները իրականացրել են անհատական խորհրդատվություններ **73 երեխայի հետ, որից 29 աղջիկ, 43 տղա:**
- Սոցիալական աշխատող *Տ. Դաքաղյանի* կոցմից իրականացվել է անհատական սոցիալական խորհրդատողություն **36 երեխայի հետ,** որից **տղա 21, 15 աղջիկ**: Անհատական խորհրդատվությունները շահառու երեխաների հետ իրականացվել են ուղղված կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, սոցիալական պատմության, գենոգրամի և էկոգրամի, անհատական միջամտության պլանի կազմմանը: Անհատական խորհիրդատվություններ իրականացվել են նաև ուղղված ընտանեկան և միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, սոցիալական հմտությունների,

էթիկայի կանոնների յուրացմանը, ինքնաճանաչմանը, ճկունությանը, միջանձնային կոնֆլիկտների կարգավորմանը, կենտրոն հաճախելու գրաֆիկի հստակեցմանը, կատարվելիք աշխատանքների պլանավորմանը:

- Սոցիալական աշխատող *Ն. Գևորգյանի* կողմից իրականացվել է անհատական խորհրդատվություն թվով **37** շահառուների հետ, որից **15** աղջիկ, **22** տղա: Անհատական աշխատանքները ուղղված են եղել շահառուների մոտ առկա խնդիրների հաղթահարմանը: Ըստ անհատական ուսուցման պլանների, շահառուների մոտ առկա խնդիրները կապված են շահառուների ինքնաճանաչման բացհայատման, շփման, հաղորդակցման ոլորտի զարգացման, ծնող-երեխա հարաբերությունների կարգավորման, ինքնադրսևորման կարողության զարգացման, միջանձնային հարաբերությունների կարգավորման, կոնֆլիկտայնության նվազեցման, հակասոցիակալան վարքագծի կարգավորման, էթիկայի կանոնների յուրացման ինչպես նաև աղանդավորկական շարժման մեջ ընդգկված լինելու բացասական հետևանքների մասին: Կատարված աշխատանքները նպաստել են մասամբ վերը թվարկված խնդիրների կարգավորմանը, աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

**<u>Խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**

- Կենտրոնի սոցիալական աշխատող *Ն. Գևորգյանի* կողմից անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **27** ընտանիքի անդամի հետ, որից **25** մայր, **2** տատիկ: Անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել շահառուների և ընտանիքի կարիքների դուրսբերմանը, երեխաների սոցիալական միջավայրի դուրսբերմանը, ծնող-երեխա հարաբերությունների կարգավորմանը, տարիքային առանձնահատկությունների հետ կապված դժվարությունների հաղթահարմանը, ինչպես նաև աղանդավորկական շարժման մեջ ընդգրկված լինելու բացասական հետևանքների մասին:

- Սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատվություն է իրականացրել **28** շահառուի հետ, որից **1** հայր, **26** մայր, **1** տատիկ: Անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել ընտանիքներում առկա հիմնախնդիրների հաղթահարմանը, ծնող-երեխա փոխհարաբերություններում առկա առանձնահատկություններին, ծնողավարման հմտությունների բարելավմանը, երեխայի և ընտանիքի հետ տարվող աշխատանքի ընթացքին, ձեռքբերումներին, և կատարվելիք աշխատանքին: Կատարվել են ուղղորդումներ հոգեբանի, լոգոպեդի հետ աշխատելու համար:

## <u>ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն</u>** հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **73 երեխայի հետ, որից 29 աղջիկ, 43 տղա:** Աշխատանքները իրականացվել են այն երեխաների հետ, ովքեր ունեն հուզական, հոգեխոսքային, նյարդային գերակտիվություն, օժտված են վարքային դրսևորումներով և այն երեխաների հետ, ովքեր չեն համապատասխանում իրենց տարիքային զարգացմանը:
Անհատական աշխատանքի նպատակը հետևյալն էր՝ լիարժեք պայմաններ ստեղծել անձը զարգացնելու հարցում, թերապիաների միջոցով օգնել հասկանալ իրենց անհատական

առանձնահատկությունները, խնդիրները, պատճառները, խանգարող հանգամանքները, սեռատարիքը, որի ընթացքում երեխան գտնվում է ճգնաժամային վիճակում և որի համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝ շտկողական, զարգացնող, ուսուցանող:

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**
Անհատական հոգեբանական խորհրդատվություն հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **16** ընտանիքի անդամի հետ, որից **14** մայր, **2** տատիկ **:**
Աշխատանքի ընթացքում տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն: Ծնողներին ցուցվել է հոգեբանի հետ զուգահեռ ցուցաբերել հետևողականություն երեխաների շտկման ուղղությամբ, հարգալից վերաբերմունք, սեր ու գուրգուրանք տալ երեխաներին:

**<u>ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ:</u>**
Համատեղ մասնագիտական խորհրդատվություն իրականացվել է **8** երեխայի, որից **4** տղա, **4** աղջիկ և **7** ծնողի հետ/ մայր/:

- *<u>Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը և հոգեբան Ա. հակոբյանը</u>* համալիր խորհրդատվություն են իրականացրել թվով **4** երեխայի հետ, որից **2** աղջիկ, **2** տղա, **3** ծնողի հետ /մայր/:
- *<u>Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը և հոգեբան Ա. հակոբյանը</u>* համալիր խորհրդատվություն են իրականացրել թվով **4** երեխայի, որից **2** տղա, **2** աղջիկ/ և **4** ծնողի /մայր/ հետ:

**Հոգեբանական քարտի լրացում:** Հաշվետու ժամանակահատվածում լրացվել է անհատական հոգեբանական քարտ **7** երեխայի համար, որից **2** աղջիկ, **5** տղա:

**<u>ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԹԻՐԱԽ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ</u>**

**<u>1. Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խումբ:</u>**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը կազմել են **3** թիրախ խումբ, որի շրջանակներում իրականացրել են կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը ուղղված խմբային աշխատանքներ:
Թիրախ խմբերում ընդհանուր ներգրավված է եղել ընդհանուր թվով **37** երեխա, որից **15** աղջիկ, **22** տղա: Խմբերը իրականացվել են երեք մասնագետների կողմից.

- <u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբ 1-ը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը:</u>

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **4** հանդիպում թիրախ խմբում, որին մասնակցել է **14** երեխա, որից **6** աղջիկ, **8** տղա: Հանդիպումների շարքը նպատակ ուներ բարձրացնելու մասնակիցների շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակը: Դասընթացների ընթացքում երեխաները ծանոթացել են հետևյալ ենթաթեմաներին. ինչ է արժույթը, եկամուտը, ծախսը, խնայողությունը, բյուջեն: Պրակտիկ առաջադրանքների, վարժությունների, խաղերի միջոցով ամրապնդվել են ստացված տեսական գիտելիքները: Հանդիպումների արդյունքում, մասնակիցները ձեռք են բերել հմտություններ, որոնք կօգնեն ավելի արդյունավետ տնօրինել իրենց ֆինանսական միջոցները, քանի որ հասկացել են, թե ինչ է եկամուտ-ծախս-խնայողություն փոխկապակցված շղթան, բյուջեի կառավարումը, սովորել են նպատակներ սահմանել, դնել առաջնահերթություններ ըստ կարևորության աստիճանի և խնայողությունների հաշվին իրականացնել իրենց առջև դրված նպատակները:
Կիրառվել են հետևյալ մեթոդները.

- <u><<Ֆինանսական լոտո>> սեղանի ինտելեկտուալ խաղ</u>

- <<Խնայողություններ>> սեղանի ինտելեկտուալ խաղ
- <<Բյուջեի կառավարում>> վարժություն
- Խմբային քննարկում
- Մտագրոհ

- Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ թիրախ խումբ 2-ը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է թիրախ խումբ, որին մասնակցել են թվով **9** շահառու, որից **6** աղջիկ, **3** տղա: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 թեմատիկ խմբային հանդիպում հետևյալ թեմաներով՝

- Ծանոթացում
- Ինքնաճանաչում
- Հաղորդակցման հմտություններ

1-ին հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծանոթացում և ներկայացվել է այն թեմաները, որոնք որ պետք է անցկացվեն կյանքի հիմնրարար հմտությունները նպաստող խմբում: Հանդիպմանը մասնակցել է **6** շահառու, որից **4** աղջիկ, **2** տղա: Իրականացվել է խաղ-վարժանք <<Ասա ով ես դու>> անվամբ, որի ժամանակ երեխաները կազմել են զույգեր և հարց ու պատասխանի միջոցով դուրս են բերել ամեն մեկի ուժեղ և թույլ կողմերը, հետաքրքրությունները և նախասիրությունները:

Երկրորդ խմբային աշխատանքի ընթացքում քննարկվել է <<Ինքնաճանաչում>> թեման, որի նպատակն էր օգնել շահառուներին ճանաչել իրենց առանձնահատկությունները, հետաքրքրությունները, ուժեղ և թույլ կողմերը: Խմբային աշխատանքին մասնակցել են թվով 8 շահառու, որից՝ **5** աղջիկ, **3** տղա: Հանդիպման ընթացքում ներկայացվել և քննարկվել է ինքնաճանաչաման ընդհանուր բնութագիրը, ինքնաճանաչման հիմնական ուղղությունները: Հանդիպումները նպաստեցին շահառուների ինքնաճանաչման հմտությունների զարգացմանը, կապված ուժեղ և թույլ կողմերի հետ:

Երրորդ խմբային աշխատանքը ուղղված էր հաղորդակցման հմտություններ թեմային, որի նպատակն էր զարգացնել շահառուների հաղորդակցման հմտությունները, խմբային աշխատանքին մասնակցել են թվով **8** շահառու, որից **4** աղջիկ, **4** տղա: Հանդիպման ընթացքում քննարկվել է հաղորդակցաման ընդանուր նկարագիրը, ներկայացվել է տեսակները՝ վերբալ և ոչ վերբալ:

- Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբ 3 -ը վարել է կենտրոնի հոգեբան Ա. Հակոբյանը:

Հաշվետու ժամանակահատվածում թիրախ խմբին մասնակցել է **14** երեխա, որից **3** աղջիկ, **11** տղա: Ընդհանուր առմամբ իրականացվել է **2** հանդիպում հետևյալ թեմաներով՝

- Ծանոթացում
- Քննադական մտածողություն

Առաջին խմբային հանդիպմանը մասնակցել է թվով **11** երեխա, որից **10** տղա, **1** աղջիկ: Խմբային աշխատանքի նպատակն էր երեխաներին ծանոթացնել կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանն նպաստող խմբին: Իրականացվել է խմբային խաղ-վարժաքներ, որոնք նպաստել են միմյանց ավելի լավ ճանաչելուն:

Երկրորդ խմբային աշխատանքը ուղղված էր քննդական մտածողությանը, որին մասնակցել են թվով հոգի **8** երեխա, որից **5** տղա, **3** աղջիկ; Հ անդիպման նպատակն էր շահառուների մոտ ձևավորել քննադատության տեխնիկան, որը մարդը կարող է հարցականի տակ դնել սեփական հասակացածները և համոզմունքները, զարգացնելով անհրաժեշտ և կարևոր նախապայմանը:

**2. Արտթերապիայի** խումբը իրականացվել է կենտրոնի հոգեբանի կողմից:
Իրականացվել է արտթերապիայի **2** խումբ:
Առաջին խմբին մասնակցել են **10** երեխա, որից **5** աղջիկ, **5** տղա:
2-րդ խմբին մասնակցել են **13** երեխա, որից **6** աղջիկ, **7** տղա: Արտթերապիայի խումբը նպաստել է երեխաների հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը: Աշխատանքի ընթացքում վեր է հանվել ուժեղ և թույլ կողմերը և այլն:
Իրականացվել են հետևյալ թերապիաները՝

- Ավազաթերապիա
- Նկարչաթերապիա
- Հեքիաթաթերապիա
- Պլաստիլինով ծեփ
- Երաժտաթերապիա

Ըստ հոգեբանի դիտարկման թերապիայի միջոցով երեխաները կարողացել են ստեղծագործել, աշխատել և զգալ իրավիճակները, նրանք կարողանում են ազատ արտահայտվել:
Թերապիան ազդում է երեխաների հոգեվիճակի վրա, նրանք կարողանում են կողմնորոշվել տարածության մեջ, պակասում է ագրեսիվ և նյարդային դրսևորումները, հուզական լարվածությունը, վախերը, ֆոբիաները, օգտագործում են իրենց մեջ կուտակած էներգիան:

**3. Առաջնորդների խումբ:** Խումբը իրականացվում է կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում խմբի հետ հանդիպումներ է ունեցել նաև կենտրոնի համակարգող Ս. Խաչիկյանը և սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը:
Խումբը իրականացվում է կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից:
Խմբի նպատակն է երեխաներին փոխանցել առաջնորդական հմտություններ, որոնք կկիրառվեն գործնականում:
Հաշվետու ժամանակահատվախում Առաջնորդների խումբը կազված է եղել **11** անդամներից, որից **8** աղջիկ, **3** տղա:
Հաշվետու ժամանակահատվածում առաջնորդական խմբի **6** շահառուներ, որից **4 աղջիկ, 2 տղա**, որպես ջոկատավարներ հանդես են եկել <<Հասակակիցները հասակակիցների համար>> սոցիալ-կրթական հնգօրյան ճամբարին, որի նկարագրությունը առկա է սույն հաշվետվության 7-րդ կետում:
Իրականացվել է խմբային հանդիպում, որի ժամանակ իրականացվել է ճամբարի արդյունքների վերլուծություն, ամեն մեկը SWOT վերլուծության միջոցով ներկայացրել է թե ինչպիսի դժվարությունների է հանդիպել այդ օրերի ընթացքում:

**4. Էթիկա և առողջ սովորույթներ:**
Խումբը իրականացվել է սոցիալական աշխատողի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում թիրախ խմբում իրականացվել է **3** հանդիպում: Հանդիպումներին մասնակցել է **7** երեխա, որից **3 աղջիկ, 4 տղա**: Հանդիպումներին քննարկվել են հետևյալ թեմաները.

- Հաղորդակցման էթիկա
- Էթիկայի նորմերը փողոցում, բնության գրկում, հանրային վայրերում
- Էթիկայի նորմերը տրանսպորտային միջոցներից օգտվելուց

Կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- Խմբային քննարկում
- Մտագրոհ
- Թեմատիկ պաստառների պատրաստում

➢ <<էթիկայի երկիր>> խաղ- վարժանք

Հանդիպումների արդյունքում երեխաները յուրացրել են մի շարք վարքագծի կանոններ, որոնք օգնում են ավելի արդյունավետ շփվել, հաղորդակցվել շրջապատի հետ:

Խմբային հանդիպման ընթացքում իրականացվել է խաղ-վարժանք <<Էթիկա, քաղաքավարության կանոններ>> անվամբ, որի նպատակն էր անցած թեմաների կրկնողություն և ամրապնդում: Խաղի ժամանակ երեխաները ստանում էին քարտեր և քարտի վրա տրված երկու պատկերցներից ընտրում էին, որ վարվեցողության ձևն է ընդունելի, որը ոչ:

**<u>5. Մտածողության զարգացման խումբ:</u>** Կենտրոնի հոգեբանի և սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է **2** թիրախ խումբ: Իրականացվել են **2** հանդիպումներ: Խմբին մասնակցել է **2** երեխա, որից **1** տղա, **1** աղջիկ: Առաջին հանդիպման ընթացքում քննարկվել է մտածողության զարգացման փուլերը, իրականացվել է հանելուկների վերլուծություն <<Կռահիր և պատասխանիր>> մեթոդի օգնությամբ: Երկրորդ հանդիպման ընթացում իրականացվել է <<Անավարտ պատկերներ>> մեթոդիկան, որի ժամանակ երեխաները անվարտ պատկերնը դարձրել են ավարտուն, գունավորել և իրենց ստեղծագործական մտածողության շնորհիվ բերել են ավարտուն տեսքի:

## <u>ԼՈԳՈՊԵԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</u>

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են համապատասխան աշխատանքներ լոգոպեդական աջակցության կարիք ունեցող երեխաների աջակցությունը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Ուսումնասիրվել են երեխաների անամնեստիկ տվյալները, բացահայտվել են խոսքային խանգարումները: Յուրաքանչյուր երեխայի համար մշակվել է հեռանկարային զարգացնող պլան: Երեխայի կարիքին համապատասխան անցկացվել են անհատական պարապմունքներ, կիրառելով տարբեր մեթոդներ:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում **13 երեխայի (որից 10 տղա և 3 աղջիկ)** հետ աշխատանքի ընթացքում կիրառվել են հետևյալ **3** մեթոդները:

- **Գործնական մեթոդներից** են վարժությունները, խաղերը, հաղորդակցման իրավիճակների մոդելավորումը:
- **Զննական մեթոդներից** են դիդակտիկ նյութերը, դիտումը, ունկնդրումը:
- **Բառային մեթոդներից** են խոսքային նյութերը, պատմվածքները, զրույցը, ընթերցանությունը:

Մասնագետի կողմից կազմվել և լրացվել են հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

· Խոսքի հետազոտման քարտ
· Լոգոպեդի առաջնային գնահատման թերթիկ ձևաթուղթ
· Հաղորդակցման մատրիցա

**<u>Լոգոպեդի կողմից իրականացվող անհատական աշխատանք/խորհրդատվություն երեխաների հետ:</u>** Համագործակցելով կենտրոնի մասնագիտական թիմի հետ կազմվել է աշխատանքային գրաֆիկ: Կատարվել են դիտարկումներ, բացահայտվել են երեխաների մոտ առկա խոսքային խանգարումները և աշխատանքներ են իրականացվել դրանց շտկման ուղղությամբ: Դիտարկումների արդյունքում բացահայտվել է լոգոպեդական միջամտության կարիք ունեցող **10** երեխա /**որից 9 տղա, 1 աղջիկ**/, կատարվել է խոսքային հետազոտություն, խնդրի բացահայտում, և ստացել են կարիքին համապատասխան լոգոպեդական աջակցություն, ըստ անհատական պարապմունքների գրաֆիկի:

Լոգոպեդի կողմից իրականացվել է շահառուի առաջնային կարիքի գնահատում և ըստ խոսքի ձևավորման ախտահարման աստիճանի աշխատանք է իրականցվել **10** շահոռուների հետ, ովքեր ունեն հետևյալ խնդիրը.

- **3 երեխա (2 տղա, 1 աղջիկ)** ունեն ԽԸԹ-ի I մակարդակ, նրաց մոտ առկա է խոսքային հաղորդակցման միջոցների բացակայություն, կիրառում են հաղորդակցման հարալեզվական ձևեր, արտաբերում են առանձին հնչյուններ, առկա են որոշ թոթովանքային և ճիշտ արտաբերվող բառեր:
- **4 երեխայի (4տղա)** հետ, ովքեր ունեն ԽԸԹ-ի III մակարդակ: Երեխաները կիրառում են ընդարձակ նախադասություններ, թույլ են տալիս ձևաբանական և շարահյուսական սխալներ, վերջինիս բառերի վանկային կառուցվածքը խանգարված է կամ խանգարված չէ:
- **1 երեխա (1տղա)**, ովքեր ունեն ԽԸԹ-ի IV մակարդակ: Երեխաները ունեն ոչ խիստ արտահայտված ԽԸԹ, դժվարանում են կրկնել բարդ վանկային կառուցվածք ունեցող բառերը, ունեն բառափոխության և բառակազմության դժվարություններ, պատմելիս դժվարանում են պահպանել իրադարձությունների տրամաբանական հաջորդականությունը:
- **5 երեխայի մոտ (3 տղա, 2 աղջիկ**) մատ առկա է ՀԹ, ր, ռ, ս,շ , ջ-չ ճ հնչյունի շտկում:

Հնչյունային թերզարգացում (ՀԹ)-ը առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի խանգարում, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:

Հնչյունային թերզարգացումն անվանում են նաև «կոսմետիկական» թերություն, քանի որ այս դեպքում հնչարտաբերման թերությունները չեն ազդում խոսքային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի, ընթերցանության և գրի վրա: Հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման խանգարում է, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:

Հնչյունների սխալ արտաբերման շտկումն իրականացվել է հետևյալ փուլերով.

- Նախապատրաստական
- Հնչյունի դրում
- Դրված հնչյունի ամրապնդում
- Դրված հնչյունի տարբերակում այլ հնչյուններից

Հնչարտասանության ամրապնդումն իրականացվել է դիդակտիկ խաղերի և վարժությունների միջոցով: Ուսումնասիրվել են երեխաների կարողությունների և հմտությունների զարգացման շարժընթացը: Շահառուների շրջանում խոսքի բառաքերականական կառուցվածքի շտկում կատարվել է հետևյալ ուղղություններով.

- Բառապաշարի հարստացում
- Քերականական սխալների շտկում
- Կապակցված խոսքի զարգացում/ պատմել նկարը. պարզ սյուժե/
- Կազմել պատմություն՝ ըստ նկարների շարքի
- Վերապատմել տեքստը
- Պատմել ինքնուրույն
- Յուրահատուկ դրսևորումներ խոսքում, էխոլալիայի շտկում
- Խոսքի համապատասխանեցում գործողություններին
- Կարդալու և գրելու հմտությունների ձևավորում և զարգացում
- Խոսքի բառաքերականական կառուցվածքը շտկելու նպատակով իրականացվում է հարց ու պատասխան, խաղերի, զրույցի, նկար-քարտերի միջոցով

**<u>Լոգոպեդի կողմից խորհրդատվություն երեխաների ծնողների հետ:</u>** Ծնողների հետ անցկացվել են խորհրդատվական զրույցներ, տեղեկացվել են երեխայի կարիքների և

զագացման առանձնահատկություններին վերեբերվեղ մոտեցումների մասին,ներկայացվել է աշխատանքի բնույթն ու աջակցության ձևերը:

**Խոսքի զարգացման թիրախ խումբ:** Կենտրոնի լոգոպեդը աշխատել է **1** խմբի հետ: Խմբում երեխաների հետ աշխատանք է իրականցվել ուղղված խոսքի ընդհանուր զարգացմանը: Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել երեխաների հաղորդակցման հմտությունները:
Խումբը բաղկացած է եղել **9** երեխայից, որից **7** տղա, **2** աղջիկ: Խմբի հետ իրականացվել է **7** խմբային հանդիպումներ հետրյալ թեմաներով՝

- Ծանոթացում
- Խմբային կանոնների որոշում
- Բանավոր խոսքի զարգացում
- Գրավոր խոսքի զատգացում

Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը:

- ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման
- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սյուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվել կապակցված խոսքի զարգացմանը ուղղված
հետևյալ կերպ.

- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սայուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարլավումը, կապակցված խոսքի զարգացումը, գրավոր խոսքի զարգացումը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը:

**Խմբավարի ծառայություն:**

**1. Պարի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում, պարի խմբին մասնակցել է **12** երեխա (աղջիկ): Հունիս ամսին դուրս է եկել 1 երեխա և ներգրավվել է 2 երեխա նրա փոխարեն: Դասընթացները տեղի են ունենում պարային ստուդիայում՝ շաբաթական երկու օր հաճախականությամբ:
Ս/թ հուլիս ամսվա ընթացում խմբի 2 երեխաներ մասնակցել են <<Նարնջագույն Կոբուլետի>> պարի փառատոնին նախաձեռնված Լունա պարային համույթի կողմից:

**2. Նկարչության խումբ:** Հաշվետու ժամանակահատվածի հունիս ամսից կենտրոնում մեկնարկվել է նկարչության խումբը, որը իրականացվում է շաբաթական 1 անգամ՝ կենտրոնի կամավորի կողմից: Խմին մասնակցել է **4** երեխա, որից **2** աղջիկ, **2** տղա:
Մասնակիցները նկարելեն բնություն, իրենց առօրյան տանը և դպրոցում:

**3. Անգլերենի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածի սեպտեմբեր ամսից կենտրոնում մեկնարկվել է նկարչության խումբը, որը իրականացվում է շաբաթական 2 անգամ՝ կենտրոնի կամավորի կողմից:
Կազմվել է երկու թիրախ խումբ, **13** մասնակից, որից **7** աղջիկ, **6** տղա: 1- ին խմբին մասնակցել են թվով **6** շահառուներ որից **2** աղջիկ, **4** տղա, իսկ երկրորդ թիրախ խմբին մասնակցում են թվով **7** շահառուներ, որից **5** աղջիկ, **2** տղա: Մասնակից երեխաները սովորել են բառապաշարը զարգացրող արտահայտություններ և գոյականներ, սովորել են կազմել պարզ նախադասություններ:

**3. Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90%-ի բավարարվածություն մատուցված ծառայություններից:**

2025 թ.-ի հունիսի 16-17-ն ընկած ժամանակահատվածում Հայկական Կարիտասի ՄԳ թիմը իրականացրեց մոնիթորինգի և գնահատման աշխատանքներ Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն» ծրագրի շրջանակներում՝ տրամադրված ծառայությունների/աջակցությունների արդյունավետությունն ու համապատասխանությունը գնահատելու նպատակով:
Մոնիթորինգի և գնահատման աշխատանքները տարվեցին հիմնականում ծրագրային գործողությունների քանակական և որակական ուղղությամբ: Գնահատման համար ընտրվեց ծրագրի գործունեության 2025թ.-ի հունվարից մինչև դիտարկման համար նախատեսված ամիսը 17.06.2025թ.:
Ըստ նախապես մշակված մոնիթորինգի և գնահատման պլանի՝ ստուգվել են ծրագրային փաստաթղթերը, պլանային և փաստացի իրավիճակը գնահատելու և շեղումները բացահայտելու համար: Ինֆորմացիայի հավաքագրումն իրականացվել է այցերի, հարցաթերթերի և ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով, ներառելով և՛ ծնողներին, և՛ երեխաներին, և՛ կենտրոնի անձնակազմին, հասկանալու համար գործողությունների արդյունավետությունը, շահառուների բավարարվածությունը, ինչպես նաև խնդիրներն ու դժվարությունները:
Մոնիթորինգային աշխատանքների կազմակերպման ժամանակահատվածում հարցումներին **49** ծնողից մասնակցել է **33** ծնող, ինչը կազմում է ընդհանուր շահառուների **67.35%-**ը, իսկ երեխաներից մասնակցել են **71**-ից թվով 17-ը՝ **23.94%: Ի**նչպես նաև այցեր են իրականացվել բոլոր **6** շահառու տնային տնտեսություններին՝ կազմելով **100%**:
Ծնողների մասնակցությամբ ֆոկուս-խմբային քննարկման արդյունքում հաստատվեց, որ ծնողները ևս պարբերաբար մասնակցում են տարբեր թեմաներով դասընթացների, և արդյունքում ավելի համակարգված գիտելիքներ են ձեռք բերել երեխաների տարիքային առանձնահատկությունների մասին: Եղան նաև հավաստիացումներ, որ, ըստ անհրաժեշտության, սոցիալական աշխատանք է տարվում ընտանիքի հետ, տրվում է համապատասխան խորհրդատվություն և ուղղորդման ծառայություններ:
Հարցված բոլոր ծնողները նշեցին, որ կենտրոն հաճախելուց, հագեցած օր ունենալուց բացի, երեխաներին տարեկան մեկ անգամ տրամադրվում են նաև միանվագ փաթեթներ՝ գրենական պիտույքների և հիգիենիկ պարագաների տեսքով: Ծնողների պնդմամբ՝ կենտրոն հաճախելու արդյունքում երեխաների մոտ նկատվում է առաջընթաց տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ հաղորդակցման հմտություններում, ճանաչողական զարգացման, հուզական բարեկեցության և սոցիալական փոխգործակցության մակարդակներում: Հավելեցին նաև, որ էապես փոխվել է երեխաների առօրյան, դարձել են ավելի հանգիստ, շփվող, գրագետ, հանդուրժող ու կարգապահ:
Ամփոփելով գնահատման աշխատանքները՝ և՛ ծնողները, և՛ երեխաները հավաստիացրեցին, որ կենտրոնի ընդհանուր պայմաններից գոհ են՝ մաքուր է, անվտանգ, ջերմ, անձնակազմի

կողմից արժանանում են հարգալից ու սրտացավ վերաբերմունքի, ընթացքում չեն հանդիպել և ոչ մի խոչընդոտի, իսկ խնդրի առկայության դեպքում էլ տեղեկացված են, թե ուր պետք է դիմել:




**4. Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լոտում նշված շահառուների թվով:**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի §Փոքրիկ Իշխան¦ ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում ընդհանուր թվով աշխատանք է իրականացվել **73 երեխայի հետ, որից 29 աղջիկ, 43 տղա:**

Ամսեկան կտրվածքով քանակական տվյալները հետևյալն են՝

- *Հուլիս **68** շահառու, որից **29** աղջիկ **39** տղա*
- *Օգոստոս -**68** շահառու, որից **30** աղջիկ **38** տղա*
- *Սեպտեմբեր **67** շահառու, որից **30** աղջիկ **37** տղա*

Երեխաների տարիքային և սեռային բաժանում՝

- 0-6 տ.- **5 երեխա՝ 1 աղջիկ, 4 տղա**
- 7--14 տ.- **62 երեխա՝ 37 տղա, 25 աղջիկ**
- 15-18 տ.- **6 երեխա՝ 5 աղջիկ 1 տղա**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտված շահառուների քանակական տվյալները հետևյալն են՝

- **Սոցիալական ծառայություն** իրականացվել է - **73 երեխայի հետ, որից 29 աղջիկ, 43 տղա: 48** մայր, **4** հայր, 1 քույր, 1 հորեղբայր, 1 քեռի, 1 եղբայր, 5տատիկ,1 պապիկ:

- **Հոգեբանական ծառայություն**– **73** երեխայի հետ, որից **29 աղջիկ, 43 տղա 16** ընտանիքի անդամի հետ, որից **14** մայր, **2** տատիկ
- **Լոգոպեդի ծառայություն -10** երեխայի հետ, **որից 9 տղա, 1 աղջիկ**
- **Տաք սնունդ կենտրոնում- 71 երեխայի հետ, որից 28 աղջիկ, 43 տղա**
- **Անձնական ուղեկցողի ծառայություն**- 6 երեխա, որից 1 աղջիկ, 5 տղա
- **Խմբկավարի ծառայություն- 14, որից 13 աղջիկ, 1 տղա**

Հաշվետու ժամանակահատվածում երեխաները հաճախել են հետևյալ խմբակներ՝

- Պարի խումբ- **12** երեխա /աղջիկ/
- Նկարչության խումբ-**4** երեխա /2 աղջիկ, 2 տղա/
- Անգլերենի խումբ-**13** մասնակից /**7** աղջիկ, **6** տղա/

**5. Արտակենտրոն ծառայություններ ստացած ՀԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների թիվ:**

Հաշվետու ժամանակահատվածում չեն մատուցվել արտակենտրոն ծառայություններ:

**6. Երեխաների կրթական իրավունքի իրացման համար ստեղծված պայմաններ (արդյունքը չի հետապնդում դասապատրաստում, այլ սոցիալական մանկավարժի կողմից՝ կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթական համակարգում ընդգրկվածության հարցինաջակցություն):**

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում չի գրանցվել նմանատիպ դեպք:

**7. Համայնքային մշակությանհին կյանքին ԿԴԻՀ երեխաների ընդգրկվածության ապահովում:**

**«Ոչ բռնությանը» միջազգային օրվան նվիրված միջոցառումներ շարք**

2007 թ. հունիսի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հաստատել է հոկտեմբերի 2-ը որպես «Ոչ բռնությանը» միջազգային օր: Այդ կապակցությամբ Գավառի ՓԻ կենտրոնը ՀՀ ԱՍՀՆ նախաձեռնությամբ սկսել է իրակացրել է միջոցառումների շարք սեպտեմբեր ամսվանից: Ս/թ հոկտեմբերի 2-ին պլանավորված է իրականացվել կլոր սեղան շահակիր կառույցների և ծրագրի շահառուների մասնակցությամբ: Իրականացվել են <<Բռնության տեսակները, պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներ>> թեմայով դասընթաց ծրագրի շահառու երեխաների և ծնողների համար:

**Հանդիպումներ 41 ծնողների հետ:** Հանդիպման ընթացքում ներկայացվել է բռնության հիմնական տեսակները (ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական, անտեսում): Տրվել են սահմանումները, բնութագրերը, երեխաների վրա բացասական հետևանքները, ներկայացվել են այն ախտանիշները /ազդանշանները, որոնք հուշում են երեխաների բռնության ենթարկված լինելու մասին: Ներկայացվել է անձնական սահման հասկացությունը, երեխաների համար ապահով և անվտանգ միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը, խոսվել է նաև այն կառույցների մասին, որոնց կարելի է դիմել բռնության ենթարկվելու, կամ վտանգ զգալու դեպքում:

*Արդյունքում մասնակիցները գիտակցեցին բռնության վտանգները, ճանաչեցին դրանց դրսևորումները և կարևորեցին երեխաների համար անվտանգ միջավայրի առկայության դերը վերջիններիս առողջ զարգացման համար:*

**Հանդիպումներ երեխաների հետ:** Իրականացվել է խմբային աշխատանքների շարք երեխաների համար <<Բռնության տեսակները, պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներ>> և <<Հույզերի արտահայտման և կառավարման

տեխնիկաներ>> թեմաներով, որին մասնակցել են թվով **58** երեխաներ, որից **33** տղա, **25** աղջիկ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել է՝ հույզերի տեսակները, արտահայտման մեխանիզմները, բռնության տեսակները, կանխարգելման մեխանիզմները, քննարկվել է երեխաների սոցիալական ապահովության ցանցը, ներկայացվել է ինչպես չդառնալ կիբեռհափշտակիչների զոհեր:

*Հանդիպումները նպաստել են շահառուների մոտ գիտակցական մակարդակի բարձրացմանը ուղղված հույզերի արտահայտմանը, իմացան բռնության տեսակները և կանխարգելման մեխանիզմները:*

**Կարիտաս Եվրոպայի գործընկերոջ այցը Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոն:** Ս/թ սեպտեմբերի 10-ին, Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոում հյուրընկալվեց Կարիտաս Եվրոպայի հաղորդակցության բաժնի ղեկավարը: Միջոցառմանը մասնակցություն են ունեցել թվով **37** շահառուներ, որից **20** աղջիկ, **17** տղա: Հանդիպման ընթացքում պարի խումբ հաճախող երեխաները հանդես են եկել հայկական ժողովրդական պարով, իրականացվել է կենտրոնում շրջայց, որի ժամանակ կենտրոնի շահառուները ներկայացրել են կենտրոնը, այնուհետև իրականացվել է խմբային աշխատանք ուղղված ծանոթացմանը և թիմային աշխատանքին, որը նպատակ ուներ զարգացնել համագործակցության, հաղորդակցման և համատեղ որոշումներ կայացնելու հմտությունները: Աշխատանքի ընթացքում մասնակիցները բաժանվեցին **3** խմբերի և իրականացվեց <<Անավարտ պատկերներ>> մեթոդիկան, որի ժամանակ խմբից ընտվեց մեկ կամավոր ում աչքերը կապեցին և խումբը ճիշտ հրանահանգներ տալով փորձեցին ստանալ ավարտուն պատկերներ: Ավարտից հետո իրականացվեց քննարկում, որտեղ խմբերը ներկայարեցին թե ինչպիսի դժվարությունների են հանդիպել աշխատանքները իրականացնելու արդյունքում:

Խմբային աշխատանքը նպաստեց խմբում համագործակցելու, թիմի յուրաքնաչյուր անդամին հարգելու, միասնական որոշումներ կայացնելու հմտությունների զարգացմանը:

**Ճամբար Սևանի լճի ափին**: Ս/թ օգոստոսի 5-ին Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի **18** շահառու երեխաների համար, որից **13 աղջիկ, 5 տղա** կազմակերպված ամառային ճամբարը Սևանի Լճի ափին բաղկացած էր հետևյալ գործողություններից՝

- Ջոկատների բաժանում, թիմային աշխատանք
- Երեխաների ներգրավում կամավոր գործողություններում
- Ուխտագնացություն դեպի Սևանի թերակղզի, Սևանավանք վանական համալիր
- Քայլարշավ
- Նավարկություն
- Լողափնյա հանգիստ
- Ջրային և ցամաքային խաղեր
- Համատեղ ուտեսների պատրաստում և ճաշակում
- Պարային մրցույթներ

**<<Հասակակիցները հասակակիցների համար>> սոցիալ-կրթական հնգօրյան ճամբար:** Կարիտաս Իտալիայի աջակցությամբ «Հզորացնելով Սոցիալական Տնտեսություն» ծրագրի շրջանակում հայտարարված «Սոցիալական Համերաշխության Տնտեսության» նախաձեռնությունների աջակցության շրջանակում ս/թ հուլիսի 14-18-ը Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվեց <<Հասակակիցները

հասակակիցների համար>>սոցիալ-կրթական հնգօրյան բակային ճամբարը: Ճամբարի կրթական ծրագիրը իրականացվեց հասակակիցները հասակակիցների համար մոդելի հիման վրա՝ կենտրոնի վերապատրաստված սաների և մասնագիտական թիմի կողմից:
Ճամբարը ուներ բնապահպանական ազդեցությունը, քանի որ իրականացվեց բնության տարածքում՝ չկիրառելով գաջեթներ, ավելի մոտ բնությանը լինելու նպատակով: Գործնականորեն ներկայացվեցին շրջակա միջավայրի պահպանության և թափոնների կառավարման կարևորությունը և իրականացումը:Ճամբարի ողջ ծրագիրը հագեցած էև խմբային աշխատանքներով, խաղային վարժանքներով, դերային խաղերով, քայլարշավներով: Ճամբարի յուրաքանչյուր օրը նվիրված էր 1 թեմայի և ծրագիրը իրականացումը միտված էր երեխաների մոտիվացիայի և սեփական նախաձեռնություններով հանդես գալու ստեղծարար մտքի զարգացմանը: Կենտրոնի առաջնորդնորի խմբի 6 մասակիցները ճամբարում ստանձնելով ջոկատավարի դեակատարությունը ձեռք բերեիցին առաջնորդական, թիմային աշխատանքի, կոնֆլիկտակայունության, հողորդակցման, ճկունության, ստեղծարար մտքի և կազմակերպճական հմտություններ: Այն նպաստեց երեխաների սոցիալական հմտությունների և կարողությունների զարգացմանը:
**5** օրյան ճամբարի **40** մասնակիցները ճամբարի արդյունքում ձեռք բերեիցին հետևյալ հմտությունները՝

- Հաղորդակցման հմտություններ
- Հաղորդակցություն և բանակցման հմտություններ
- Թիմային աշխատանք
- Շրջակա միջավայրի պահպանման կարևորություն
- Թափոնների կառավարում

«Հասակակիցները հասակակաիցների համար» սոցիալ-կրթական ճամբարին մասնակցությունը միտված էր երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը, ինչպես նաև ճամբարի արդյունքում ձեռք բերված հասույթը գրանցվեց որպես ներդրում՝ ի նպաստ Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի կայունությանը և գործուներության շարունակականությանը:
Քանի որ կազմակերպության կողմից բաց հայտարարություն և մասնակցության վճար էր տարածվել ճամբարի մասնակցության համար: Հայտարարությունը և օրակարգը հասանելի է Հայկական Կարիտասի ֆեյսբուկյան էջում:
Ճամբարին մասնակցել են 9-14 տարեկան **40** երեխաներ՝

- Վճարման հիմունքերով կենտրոնը ունեցավ **6** մասանկից, որից **2** աղջիկ, **4** տղա
- Քանի որ կենտրոնի գարծողություններին պարբերաբար ներգրավվում են կենտրոնի շրջանավարտները, այս անգամ ևս ապահովվեց **5** շրջանավարտի ներգրավվածությունը, որից **2** տղա, **3** աղջիկ
- **29** շահառու, որից **14** տղա, **15** աղջիկ

Ճամբարականները բաժամվել էին 4 ջոկատների: Գարծողությոնները իրականացվել են և՛ ջոկատներով, և՛ ընդհանուր խմբով: Իրականցվել են հետևյալ վարժանքները՝

- Սառույցկոտրուկ խաղեր
- Ծանոթացման խաղեր
- Դերային խաղ
- Շինարարություն՝ աշտարակի կառուցում
- «Թիմային մոլորակ» խաղ
- Պաստառի «Մեր թիմը ապագայում»
- Արտթերապիա «Բնությանը բարեկամ»
- Քայլարշավ դեպի Գավառի Թթուջուր: Տարածքի վերլուծություն
- Ստեղծագործությունների ցուցադրություն՝ «Էկո գանձերի որս»
- Վիկտորինա՝ «Պահպանիր մոլորակը»՝ թիմերով

- Պաստառների պատրաստում՝ էկո-խորհուրդներով, կարգախոսներով
- Թատրոն «Խոսում են թափոնները»
- Ստեղծագործական վարժություն «Վերամշակման ստուդիա»
- Էներջայզերների կիրառում

**8. Շահառուների առնվազն 90% ծնողների ընդգրկվածությամբ՝ կարիքահեն դասընթացներ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:**

Հաշվետու ժամանկահատվածում ծնողները մասնակցել են հետևյալ կարիքահեն դասընթացներին՝

- Ս/թ հուլսի 2-ին, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից կազմակերպված <<Կանանց դերը հետպատերազմյան հակամարտությունում>> թեմայով քննարկմանը մասնակցել է կենտրոնի հոգեբանը և **2** շահառու ծնող/մայր/:

**Ծնողովարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընաթացների** շարքը իրականացվել է կենտրոնի սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից: Դասընթացներին ընդհանուր թվով մասնակցել է **34** ծնող/մայր:
Հաշվետու ժամանակայատվածում իրականացվել է ծնողավարամն հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների շարք երկու խմբով: 1-ին խմբին մասկացել են թվով **17** ծնող, երկրորդ խմբին՝ **18** ծնող, յուրաքանչյուր խմբի հետ իրականացվել է **6** հանդիպում հետևյալ թեմաներով՝

- <u>Դաստիրակության ընդունելի և անընդունելի ոճեր:</u> Հանդիպման ընթացքում ներկայացվել է դաստիարակության ընդունելի /դեմոկրատական/ և անընդունելի/ ավտորիտար, թողտվական և գերհոգատարություն/ ոճերը: Ներկայացվել է ընդհանուր բնութագրերը, քննարկվել է յուրաքանչյուր ոճի կիրառման դրական և բացասական ազդեցությունը երեխաների վարքային դրսևորումների, բնավորության ձևավորման վրա: Իրականացվել է դեպքերի քննարկումներ:

- <u>Արդյունավետ հաղորդակցությունը ծնող-երեխա փոխհարաբերություններում:</u> Հանդիման ընթացքում ներկայացվել է թե ինչ է արդյունավետ հաղորդակցությունը, հաղորդակցության հիմնական սկզբունքները / ակտիվ լսում, դու ուղերձների կիրառման փոխարեն ես ուղերձների կիրառում/, զգացմունքների ճանաչում և արտահայտում, մարմնի լեզու, արդյունավետ հաղորդակցության օգուտները ծնող-երեխա փոխհարաբերություններում, ընդհանուր սխալներ հաղորդակցությունում՝
- Մեղադրանք և քննադատություն
- Համեմատություն
- Անտեսում և չլսել
- Բացասական պիտակավորում

- <u>Լոկուս վերահսկողություն:</u> Խմբային աշխատանքի ընթացքում ծնողներին ներկայացվել է լուկուս վերահսկողության սահմանումը և տեսակները/ արտաքին և ներքին վերահսկողություն/ և ներքին լոկուս վերահսկողությունը՝ որպես դրական ծնողավարման կարևոր բաղադրիչ:

- <u>Յանուշ Կորչակի 10 պատվիրանները:</u> Հանդիպման ընթացքում ծնողներին ներկայացվել է Յանուշ Կորչակի 10 պատվիրանները, յուրաքանչյուր պատվիրանի շուրջ ծավալվել է

քննարկում, բերվել են օրինակներ իրականացվել է սեփական փորձի և զգացողությունների ներկայացում:

- <u>Խրախուսանք, պատիժ, գովասանք:</u> Հանդիպման ընթացքում տրվել է Խրախուսանք, պատիժ, գովասանք հասկացությունների սահմանումները և տարբերությունները, ծնողները ներկայացրել են իրենց անձնական օրինակները թեմայի վերաբերյալ, իրականացվել են թեմատիկ նկարների և պատմությունների վերլուծություններ: Կարևորվել է երեխաների վարքի կառավարման մեջ խրախուսանքի և պատժի արդյունավետ հարաբերակցությունը դրական ծնողավարման գործընթացքում:

- <u>Տարիքային առանձնահատկությունները</u>՝ դեռահասության ճգնաժամ, 0-5,6-9. տարեկաների ճգնաժամային փուլերը/: Թեմայի շրջանակում քննարկվել է յուրաքանչյուր տարիքային խմբին բնորոշ առանձնահատկությունները, հանդիպող ճգնաժամները, դրանց հաղթահարելու մեխանիզմները: Իրականացվել է իրավիճակների վերլուծություններ, ծնողները կիսվել են իրենց փորձով:

*Այսպիսով դասընթացի արդյունքում ծնողները ծանոթացան արդյունավետ ծնողավարման հիմնական սկզբունքների մասին (սիրո ու խնամքի դրսևորում, սահմանների դնում, հետևողականություն, դրական հաղորդակցություն, երեխայի զարգացման առանձնահատկությունների ըմբռնում), թե ինչպես կիրառել դրական դաստիարակության մեթոդները առօրյա կյանքում, լուծել ընտանիքում առաջացող կոնֆլիկտները՝ առանց բռնության, լսել և հասկանալ երեխայի կարիքները: Դասընթացը նպաստեց, որ մասնակիցները դառնան ավելի գիտակից, պատասխանատու և դրական դաստիարակության սկզբունքներով առաջնորդվող ծնողներ:*

**9. Ցերեկային խնամքի ծառայություններում հաշմանդամություն ունեցող երեխաների 20% ներգրավվածություն:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված է եղել **22** երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- Ինտելեկտուալ հապաղում, մանկական տարիքի էմոցիոնալ, վարքային խանգարում - **1** երեխա /տղա/
- Լեզվական խնդիրներ՝ ԽԸԹ 3-րդ մակարդակ -**6** երեխա / տղա
- Լեզվական խնդիրներ՝ ՀԹ- **1** տղա
- Հեռատեսություն - **1** երեխա /տղա
- Անբավարար փարթամություն-**1** երեխա /տղա/
- Թեթև մտավոր հետամնացություն, ԽԸԹ-3-րդ մակարդակ -**1** երեխա/տղա
- Հետխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկա, ԽԸԹ 1-ին մակարդակ- **3** / 1 աղջիկ, 2 տղա/
- Հետխոսքային զարգացման հապաղում, ԽԸԹ-3-րդ մակարդակ- **1** երեխա/ տղա
- Խոսքի հապաղում, ԽԸԹ 3-րդ մակարդակ- **1** երեխա /տղա
- Չափավոր մտավոր հետամնացություն, ուղեկցվող անբավարար ֆիզիկական զարգացում, ԽԸԹ 3-րդ մակարդակ- **1** երեխա/ 1տղա,
- Մտավոր /ինտելեկտի/ 2-րդ աստիճան-**2** երեխա /1աղջիկ, 1 տղա
- Մտավոր /ինտելեկտի/ 1-րդ աստիճան -**2** երեխա /1տղա, 1 աղջիկ
- Աուտիստիկ սիմպտոմատիկա -**1** տղա

**10. Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաներ,**
**11. Ծառայություններում ընդգրկված վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ներդրված առանձին բաղադրիչ:**

Կենտրոնի ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվը հաշվետու ժամանակահատվածում **5** (տղա) է:
Վարքային դրսևորումներ ունեցող բոլոր երեխաները հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող բոլոր ծառայություններում:

**12. Անձնական ուղեկցողի աջակցությունից օգտվող երեխաներ**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու 6 երեխա (5 տղա, 1 աղջիկ) օգտվել են անձնական ուղեկցողի ծառայությունից:
Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝

- Վարքային դրսևորումներ
- Հետխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկա

Անձնական ուղեկցողը գնահատելով երեխայի կարիքները, ուղղորդել է վերջինիս մասնակցելու նախընտրած խմբային աշխատանքներին՝ ապահովելով նրա ակտիվ մասնակցությունը, օգտագործելով սեփական կարողությունները:
Երեխայի ներառման նպատակով անձնական օգնականը ապահովել է վերջինիս մասնակցությունը համայնքում և կենտրոնում իրականացվող միջոցառումներին:

**13. Տրամադրված ծառայությունների արդյունքում ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների վիճակի մեղմում (առնվազն 60% շահառուների դեպքում) և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում (առնվազն 40% շահառունի դեպքում):**

**Սոցիալական աջակցության տրամադրում:** Ս/թ օգոստոս ամսվա ընթացում կենտրոնի **66** շահառուների (որից **29** աղջիկ **37** տղա) տրամադրեվել է գրենական պարագաների փաթեթ: Տրամադրված սոցիալական աջակցությունը նպաստեց ընտանիքների սոցիալական վիճակի մեղմմանը:

**14. Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր:**
Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՍԾ-ներ **73** երեխայի համար և ըստ պլանավորման երեխաներին մատուցվում են կենտրոնի ծառայությունները:

**15. Ծառայության արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված երեխաների թիվ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**16. Ծառայություններ ստացած ԿԴԻՀ երեխաներ, որոնց ծնողները (կամ միակ ծնողը կամ օրինական այլ ներկայացուցիչը) դիմել են երեխային հաստատություն տեղավորելու համար:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**17. Ծառայություններ ստացած երեխաներ (ներառյալ նրանց ընտանիքները), ովքեր հաստատությունից վերամիավորվել են ընտանիքների հետ և անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի համաձայն կարիք ունեն ստանալու սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական ծառայություններ:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**18. Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումներ:**

Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել և ներկայացվել են շահառուների ցուցակները՝ ըստ մատուցվող ծառայությունների:
Մասնագետների կողմից լրացվել և համալրվել են անհրաժեշտ փաստաթղթերը:
§Մանուկ¦ էլեկտրոնային տեղեկատվական համակարգում մուտքագրվել և թարմացվել են դեպքերը:

## ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Անձնակազմի մասնակցություն դասընթացների/ վերապատրաստումների/ քննարկումների**

- Հաշվետու ժամանակահտվածի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին կենտրոնի համակարգող Ս. Խաչիկյանը Գավառի տարածքային ՄՍԾ կենտրոնում մասնակցել է սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի նիստին՝ որպես խորհրդի անդամ:

- Ս/թ օգոստսի 11-17-ը կենտրոնի համակարգող Ս. Խաչիկյանը, որպես երեխաների ուղեկցող մասնակցություն է ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների համար Հունգարիայի Զանկա քաղաքում անցկացված մեկշաբաթյա ամառային ճամբարին, որը իրականացվել է Հայաստանի և Հունգարիայի կառավարությունների համատեղ ջանքերով: Ծրագրի համակարգողը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է՝ Կոտայքի մարզպետարանի և «Հայկական Կարիտաս» բարեգործական ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

- Ս/թ սեպտեմբերի 17 ին կենտրոնի սոցիալական աշխատող Ն.Գևորգյանը մասնակցել է Գավառի տարածքային ՄՍԾ կենտրոնում կազմակերպված ֆորում-քննարկամանը:

- Ս/թ սեպտեմբերի 25-ին կենտրոնի մասնագիտական թիմը մասնակցել է Հայկական Կարիտասի կողմից կազմակերպված ֆոկեւս խմբային քննարկմանը և վեն են հանվել այն կարիքները, որոնց կարիքը ունի անձնակազմը աղետներին և արտակարդ իրավիճակներին դիմագրավելու համար:

- Ս/թ հուլիսի 1-2-ը՝ ծրագրի ղեկավարը, համակարգողը և սոցիալական աշխատողները մասնակցեցին Մասնագիտական այրման և երկրորդային տրավմայի կանխարգելում թեմայով երկօրյա աշխատաժողովին, որը իրականացվել էր Հայկական Կարիտասի կողմից իրականացվող «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակում:

- Ս/թ հուլիսի 3-4-ը՝ կենտրոնի համակարգողը մասնակցել է «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում Սյունիքի մարզում սոցիալական ծառայությունների մատուցման ենթադրամաշնորհներ ստացած ՔՀԿ-ների ներուժի զարգացման նպատակով Հայկական Կարիտասի սոցիալական ուղղորդողների կողմից Մեղրի համայնքում

կազմակերպված ոլորտային սոցիալական ուղղորդման հանդիպումներին՝ երեխաների և խնամքի ուղղությամբ:

- Ս/թ հուլիսի 10-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է «Տեղական սոցիալական փոփոխությունների անիմացիայի» կապիտալիզացիայի աշխատարանին, որը իրականացվել է «Հայկական Կարիտաս»-ի ԱՐԱՄԱՋԴ ծրագրի շրջանակներում:

*Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը անձնակազմի հետ պարբերաբար թիմային քննարկում/հանդիպումներ է իրականացրել հետևյալ թեմաներով՝*

- Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների քննարկում և պլանավորում
- Ընթացիկ աշխատանքների պլանավորում և վերապլանավորում
- Տնայցերի և դպրոցայցերի ժամագրաֆիկի կազմում և քննարկում
- Սոցիալական աշխատողների կողմից իրականացված առաջնային հետազոտությունների և ընթացիկ տնայցերի արդյունքների, դիտարկումների քննարկում
- Դեպքի քննարկում
- Խմբային աշխատանքների պլանավորման կազմում և թարմացում
- Խմբային աշխատանքներում երեխաների ներգրավվածություն
- Միջոցառումների պլանավորում
- Շահառուների հաճախման գրաֆիկի թարմացում, վերապլանավորում
- Դպրոցայցեր
- Եռամսյա ժամանակահատվածում միջոցառումների կազմակերպում, վերապլանավորում
- Հաջորդ եռամսյա գործողությունների պլանավորում

**<u>Աշխատանք համագործակից կառույցների հետ:</u>**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը ակտիվորեն համագործակցել է հետևյալ շահագրգիռ կառույցների հետ՝

- ՄՍԾ Գավառի տարածքային կենտրոն
- Գավառի համայնքապետարան

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հստակ տեսանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, զգալիորեն բարելավված է նրանց կյանքի հմտությունների որակը:
Բոլոր շահառուների համար կազմվել են ԱՍԾ-ներ:
Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ներգրավվելով ծառայություններում ձեռք են բերել վստահություն կառույցի և մասնագիտական թիմի նպատմամբ, ինչը հիմք է հանդիսացել անահատկան դեպքերի վարմանը:
Շահառու ծնողներին ներկայացվել է Հայկական Կարիտասի անվտանգության քաղաքականությունը և նրանք մշտապես ազատ կարողացել են արտահայտել իրենց կարծիքը և միտքը կենտրոնի կողմից իրականացվող ծառայությունների վերաբերյալ:

Սույն հաշվետովության մեջ նկարագրված բոլոր գործողությունները նպաստել են երեխաների սոցիալական ներառմանը, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների ու կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների արդյունքում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել են սոցիալ-վերականգնողական խորհրդատվություն և աջակցություն, որը խթանել է երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխել է նրանց սոցիալական մեկուսացումը:

Սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող խմբային աշխատանքներում ներգրավվածությունը նպաստել է երեխաների փափուկ հմտությունների, հաղորդակցման և բանակցային հմտությունների զարգացմանը, նրանք ձեռք են բերել առաջնորդական հմտություններ: Արտ թերապիայի շնորհիվ երեխաների ստեղծարար միտքը զարգացել է: Թերապիաները նպաստել են վերջիններիս հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:
Կենտրոնում երեխաները օգտվել են լոգեպեդի ծառայությունից և հաշվետու ժամանակահատվածում ըստ մասնագետի դիտարկման առկա է դրական առաջընթաց:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

«Ոչ բռնությանը» միջազգային օրվան նվիրված միջոցառումներ շարք

Դասընթացներ երեխաների համար՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02MBpr4hFSaFqVvtz4acfm4e2wT6byDLT6UZPejvvBkjtdZiGtQQC6dqNZepeJpD71l

Դասընթացներ ծնողների համար
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0GZ4UT9kFHn7sWQYTdJgvQ8Yg2T4Nuh15SmcwVyoEhDqDyA4hVKBwLthaAbwaqFTzl

Կարիտաս Եվրոպայի հաղորդակցության բաժնի տնօրենի այցը Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոն
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid033skH69KMiHdytrU9ZRxfabDQB4nS2pw53M23ouY5qxj1aAaLY7wyYUwtHEwnQqapl

https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/2190020184855937

Ճամբար Սևանի ափին
https://www.facebook.com/Caritas.Tirol/posts/pfbid0mTCg5EPbgZhLbQ2H3VpkGupk66owaqChspEsgD2FkMZHy8XeK7rgZKVKwDTwYWvkl

https://www.facebook.com/reel/620433794102849

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02yvVvvH6nqnVvMSFkk2SVnXkdZaEGUcsrMww3WSwV8JvfjXQZdkSQT64JDGdA4SyEI

<<Հասակակիցները հասակակիցների համար>> սոցիալ-կրթական հնգօրյան ճամբար
https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/751803163998148

Լունա պարային համույթի կողմից նախաձեռնված փառատոնի մասնակցություն
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02PFUqbBbAq1njUXtZLk4f23nT1YSRYLSoooCbsA5H8dhn1QeAoVmA4RVNCVJdhCUzI&id=100067178295375

Կենտրոնի մասնագիտական թիմի մասնակցությունը հանդիպումների/քննարկումների
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0j85vcbbr7cQEupTo1CnaMiJ6n1XWHAsjr8zTQ6rdmHsP5T4CEpVy4CTtYwucT2mYI

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02nAEucH6A93r4K8oGZMhZq1zmnxhMSiME9VUWvqqxvMjG39j7J8xJJTcZcandHu8yI

https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/2822508757948253

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Քաղաքային տրանսպորտի բացկայության և ժամերի, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայության պատճառով որոշ երեխաներ չեն կարողանում հաճախել կենտրոն:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամսյակում կշարունակվեն մատուցվել ծրագրով նախատեսված ծառայությունները:
Մասնավորապես պլանավորվում են իրականացվել հետևյալ գործողությունները՝

- Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքային հանդիպում/քննարկումներ
- Առաջնային հետազոտություն և շահառուների ընդգրկում
- Շահառուներին սոցիալական աջակցության տրամադրում
- Մանուկ համակարգում մուտքագրումների կատարում
- Ինքնաօգնության խմբերի հետ հանդիպումներ
- Աշխատանք թիրախ խմբերի հետ
- Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման արշավ
- Աղջիկ երեխաների իրավունքների վերաբերյալ միջոցառումներ
- Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված միջոցառումներ

| Պատվիրատու | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030732<br>ՀՎՀՀ 01506515<br>Գլխավոր քարտուղարի փոխարինող՝<br>Վ.Տեր-Բալյան<br><br>________________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>ք. Գյումրի , Հ.Սարգսյան 3-րդ նրբ., 8տ.<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ»մ/ճ<br>Հ/Հ 220063350387000<br>ՀՎՀՀ 05514397<br><br>Գործադիր տնօրեն՝ Գագիկ Տարասյան<br><br>________________________<br>(անուն ազգանուն, ստորագրություն)<br>Կ. Տ. |